ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 22

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով

Հաստատել Ազատավան համայնքի թիվ 8 նիստի հետևյալ օրակարգը

1.Ազատավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2015թ 3-րդ եռամսյակի մասին բյուջեի եկամուտների և ծախսերի մասով

զեկ. Ս. Խաչատրյան

2.2015թ-ի համար համայնքի տարածքում գործող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին

զեկ. Ս. Խաչատրյան

3.Համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերի մասին

զեկ. Ս. Խաչատրյան

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԵԼՍԻԿ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏԻԿ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 23

## ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2015Թ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՍԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով *համայնքի ավագանին որոշում է՝*

Ազատավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2015 թվականի 3-րդ եռամսյակի տեղական բյուջեի ընթացքը ընդունել ի գիտություն:

2015թ 3-րդ եռամսյակը՝ ըստ. եկամուտների մասով

| եկամուտ անվ | պլան | փաստացի | կատարման |
|---|---|---|---|
| 1.Հողի հարկ | 4875. 0 | 4993.6 | 102.4 |
| 2,գույքահարկ | 4725.0 | 4343.0 | 91.9 |
| 3,հողի վարձավճ | 525.0 | 526.4 | 100.3 |
| 4, տեղակ տուրք | 99.0 | 134.0 | 135.4 |
| 5. դոտացիա | 35472.8 | 35473.1 | 100.0 |
| 6. տարեսկզբի մնացորդ | 92318.7 | 92318.7 | - |
| Ընդամենը | 138015.5 | 137788.8 | 99.8 |

2015թ 3- եռամսյակը՝ ծախսային մասով

| անվանումը | պլան | կատարողը | կատ. |
|---|---|---|---|
| 1,կառավարման մարմնի պահպան | 32095.0 | 14452.8 | 45.0 |
| 2,գույքի նկատմամբ տեղեկատվ տրամադրում | 4541.0 | - | |
| 3, աղբահան և սան մաքրում | 3285.0 | 1935.6 | 58.9 |
| 4. մայրուղիների և փող.վերանկ | 12600.0 | 9905.1 | 78.6 |
| 5,արտաքին լուսավ. ցանցի շահագործ | 3700.0 | 103.1 | 2.8 |
| 6, մշակույթային միջ իրականացում | 3605.0 | 1693.7 | 47.0 |
| 7. Թատերական ներկայացումներ | 300.0 | 100.0 | 33.3 |
| 8.կենսաբան. և բնապահպ. | 122.0 | 122.0 | 100.0 |
| 9.նախադպրոցական ուսուցում | 42750.0 | 1380.0 | 3.2 |
| 10սոց անապահ անձանց աջակ | 6100.0 | 3930.0 | 64.4 |
| 11.հասարակական կազմ աջակցութ | 535.0 | 190.0 | 35.5 |
| 12.Սպորտային միջոցառումներ | 500.0 | 180.0 | 36.0 |
| 13. Հանրակրթական ուսուցում | 700.0 | 320.0 | 45.7 |
| 14. Հանրակրթական ուսուցում | 400.0 | 216.0 | 54.0 |
| 15. Հանգիստ մշակույթ այլ դասի չպատկ | 350.0 | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդամենը | 111583.0 | 34528.3 | 30.9 |
| Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ | 10143,6 | - | - |
| Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ | 2186,7 | - | - |
| Ծախսերը ընդամենը | 143595,3 | 34528,3 | 24,1 |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԵԼԻԿ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏԻԿ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 24

## 2016Թ-Ի ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և վճարների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքով և „Տեղական Ինքնակառավարման Մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

Ազատավան համայնքի համար 2016թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի- շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար՝

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգե գործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ) սույն կետի ա)ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ ,

բբ) 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20000 /քսան հազար/ դրամ,

բգ)1001քմ -3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝20000 / քսան հազար/ դրամ,

բդ) 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 / երեսուն հինգ հազար /դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

դ) 20քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների,

քաղաքաշինական
այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար/ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա- շինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

բ)Բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներից նախատեսում է, նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով ,ապա բացի սույն կետի ,,ա,, ենթակետով սահմանված դրույքաչափերի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ) նախատեսում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով ,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համարսույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3) Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

1,2,3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

5) Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար .

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար

սահմանվում է 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ:

6) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50000 / հիսուն հազար/ դրամ,

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500 / հինգ հարյուր/ դրամ:

8) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ –ի տեղադրման տուրքը սահմանվում է

ա/ այլ արտաքին գովազդի համար՝ 500/ հինգ հարյուր/ դրամ,

բ/համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակի համար՝ 700/յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000դրամ:

2. Տեղական վճարների դրույքաչափերը

Տեղական վճարների դրույքաչափերը սահմանվում են՝

ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված՝ տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու, հաստատելու, շինարարությանավարտականակտիձևակերպմանհամար, ինչպեսնաևշահագործմանթույլտվությունտրամադրելուհամար՝ տեղական ինքնակառավարմանմարմնիմատուցածծառայություններիդիմացփոխհատուցմանվճարներ ՝ 5000/ հինգ հազար/ դրամ,

բ/ համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ եղած հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 / մեկ հազար/ դրամ,

գ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 1000 / մեկ հազար / դրամ:

դ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, աղբահանությունը կազմակերպելու հետ կապված ծառայությունների դիմաց, յուրաքանչյուր բնակչից ամսեկան փոխհատուցման վճար 0 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԵԼՍԻԿ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏԻԿ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, /0235/61770, azatavan.ararat@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 25

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ ,26-րդ և 32-րդ հոդվածի 5-րդ կետով

1.Հաստատել համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016թ- ի համար հետևյալ ձևով

Համայնքի ղեկավար - 280.0հ. դրամ

*ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ*

Համայնքի ղեկավարի տեղակալ 1 - 170 ,0հ.դրամ

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*

Համայնքի ղեկավարի աշխ. քարտուղար 1 - 172,0հ.դրամ
Աշխատակազմի գլխավոր մասնագետ 1 - 170,0հ.դրամ
Աշխատակազմի գլխավոր մասնագետ 1 - 170,0հ.դրամ

1-ին կարգի մասնագետ 1 - 80,0հ.դրամ

*Մշակույթ*

Գեղմասվար 1 - 75,0հ.դրամ
գրադարանավար 1 - 75,0հ.դրամ
Աղբահանություն

| | | |
|---|---|---|
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | - 85,0հ.դրամ |
| *Բանվոր* | *1* | *- 75,0հ.դրամ* |

*ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

| | | |
|---|---|---|
| Պահակ | 1 | - 75,0հ.դրամ |
| Կատարածու | 1 | - 75,0հ.դրամ |
| Հավաքարար | 1 | - 75,0հ.դրամ |
| Օպերատոր | 1 | - 85,0հ.դրամ |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՀԵՐ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԵԼՍԻԿ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏԻԿ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ